ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1

ք. Երևան «22» դեկտեմբեր 2022թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մեհրաբյանի, որը գործում է «Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ:

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ:

2.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով. ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Մատակարարի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Մատակարարն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Մատակարարը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն:

2.4.8 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1.781.470 (<u>մեկ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն</u>) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Մատակարարի և Պատվիրատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Մատակարարի և Պատվիրատուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Մատակարարը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության <u>2</u> օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

բ) Մատակարարի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 4 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Մատակարարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Մատակարարի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Մատակարարի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Մատակարար կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Մատակարարը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Մատակարարի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը, նաև տեղեկացնում է հեռախոսակապով: Մատակարարը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե	«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արին Բերդի 24/5
Ֆին. նախ. գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02239171
ՀՎՀՀ 00243582	Բանկ՝ <<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 900011038685	Հաշվեհամար՝ 11817068501000
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝ Մ. Մեհրաբյան
Գ. Մկրտչյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«22» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	33131430/	պտտվող և հղկող գործիքներ	Հղկող Մեքենա 350 Վտ, TBG35020 լարում 220-240Վ/50Հց Հզորություն 350Վտ Պտույտների հաճ. 2950պ/ր Քարի տրամագիծ 200մմ/8" Քաշ 11կգ	հատ	42540	42540	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1	Պայմանագիր կնքելու հետո մինչև ս/թ 30.12.2022թ.
3	42661400/	Եռակցման էլեկտրական սարքեր	Մարտկոցային Զոդիչ (Պայալնիկ) 40 Վտ, TSILI2001 թույլ է տալիս միմյանց միացնել տարբեր մետաղական մասեր զոդման միջոցով, օգտագործելով հատուկ զոդեր : Լարումը՝ 220 Վ - 240 Վ - 50 Հց Հզորությունը՝ 40 Վտ : Տաքացման ժամանակը՝ 3 - 5 րոպե : Ներառյալ 4Ահ մարտկոց և 4Ա լիցքավորիչ: կամ համարժեք	հատ	43100	86200	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2	
4	31681100/	Էլեկտրական պարագաներ	**<u>Բազմաֆունկցիոնալ փորագրիչ 550 Վտ. TG55061</u>** բազմաֆունկցիոնալ փորագրիչը հարմար է տարբեր աշխատանքների համար , ներառյալ փորագրություն , ֆրեզեր , աղացում , հղկում և այլն : Ճկուն լիսեռը հեշտացնում է դժվարամատչելի	հատ	25400	50800	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2	

			վայրերի մուտքը :Պտտման արագության ճշգրտումը թույլ է տալիս ընտրել օպտիմալ ռեժիմ՝ նյութերի հետ աշխատելու համար : Փորագրիչի վրա օդափոխիչները պահում են շարժիչը սառը՝ երկարացնելով ծառայության ժամկետը : Լարումը՝ 220 - 240 Վ 50/60 Հց : Հզորությունը՝ 550 Վտ : Առանց բեռի արագությունը՝ 29000 պտ / րոպե : Ցանցի չափը՝ 6 մմ : Ապրանքի չափը՝ 480 x 100 x 90 : Քաշը՝ 2.3 կգ : Աքսեսուարների հավաքածու՝ Ադամանդե հղկող քար - 3 հատ :							Պայման ագիր կնքելու հետո մինչև ս/թ 30.12.2022թ.
5	31681100/	Էլեկտրական պարագաներ	Հորատման (Սվեռլինի) Հաստոց 350 Վտ՝ TDP133501 նախատեսված է տարբեր մակերևույթներ ծակելու համար Հորատման առավելագույն տրամագիծը՝ 13 մմ : Շպինդելի քայլը՝ 50 մմ : Սյունակի տրամագիծը՝ 46 մմ : Սեղանի չափը՝ 160x160 մմ : Հիմքի չափը՝ 290X190 մմ : Մեքենայի բարձրությունը՝ 580 մմ :	հատ	64350	64350	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1	Պայման ագիր կնքելու հետո մինչև ս/թ 30.12.2022թ.
6	44511343/	Գայլիկոն	Հորատիչ(Պերֆերատոր) մարտկոցով՝ TRHLI202287 նախատեսված է տարբեր մակերևույթներ ծակելու համար Սարքը հետը ներառում է 2 մարտկոց և լիցքավորիչ: Անխոզանակ Շարժիչ Հարվածի հզորությունը ՝ 2 ջոուլ Պտույտների հաճախականությունը՝ 0-1100 պ/ր Հարվածների հաճախականությունը ՝0-5000 կամ համարժեք	հատ	104500	104500	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1	
7	31681100/	Էլեկտրական պարագաներ	Անկյունային հղկող Մեքենա - Բալգարկա Մարտկոցով / 20Վ / 2Ա-4Ա /115մմ, TAGLI11522 Այն օգտագործում են պողպատ և տարբեր նյութեր կտրելու, տարբեր նյութեր հղկելու և բետոն կտրելու համար : Պահեստամասեր՝ Մարտկոցը լիցքավորվում է 1 ժամում : 8500 պ/ր : Առանցքի պարույրի չափը՝ M 14 : Սկավառակի նստեցման անցքը՝ 22.2 մմ : Սկավառակի տրամագիծը՝ 115 մմ : Ներառված է լրացուցիչ բռնակ, փեղկավոր պտուտակահան, հղկանյութային կտրող սկավառակ :	հատ	89300	178600	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2	

8	31681100/	Էլեկտրական պարագաներ	Անլար Բազմաֆունկցիոնալ գործիք (Ռենովատոր) 20Վ TMLI2001 TOTAL TMLI2001 - բազմաֆունկցիոնալ գործիքը կարող է հեշտությամբ և ճշգրիտ կտրել տարբեր անկյան տակ, կտրել անցքեր, սղոցել փոքր աշխատանքային կտորներ, մանրացնել, հղկել : Պտտման արագության ճշգրտումը թույլ է տալիս ընտրել օպտիմալ ռեժիմ ՝ նյութերի հետ աշխատելու համար : Փորագրիչի վրա օդափոխիչները պահում են շարժիչը սառը ՝ երկարացնելով ծառայության ժամկետը : Լարումը ՝ 20 Վ : Առանց բեռի արագությունը ՝ 5000 - 20000 պտ / րոպե : Ներառված պարագաների քանակը ՝ 8 հատ. : Քաշը ՝ 2 կգ. : Երաշխիքը ՝ 1 տարի : Աքսեսուարների հավաքածու ՝ Քերիչ - 1 հատ : Կտրող սայր ՝ 1 հատ : Ներառյալ 4Ահ մարտկոց և 4Ա լիցքավորիչ	հատ	57900	115800	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2	Պայման ագիր կնքելու հետո մինչև ս/թ 30.12.2022թ.
10	44511370/	Գործիքների հավաքածուներ	Դիէլեկտրիկ գործիքների հավաքածու 26հատ, THKITH2601 նախատեսված է էլեկրական լարման առկայության պայմաններում աշխատանքներ կատարելու համար 26կտոր VDE / GS սերտիֆիկացում: 1 հատ Մեկուսացված երկար քթի տափակաբերան աքցան ՝ 160 մմ (6″) : 1 հատ Մեկուսացված տափակաբերան աքցան ՝180 մմ (7 ″) : 1 հատ Մեկուսացված անկյունային կտրիչ ՝160 մմ (6 դյույմ) : 3 հատ Մեկուսացված պտուտակահան ՝SL3.0x75 մմ, SL4.0x100 մմ, SL5.5x125 մմ : 2 հատ Մեկուսացված Phillips պտուտակահան ՝PH1x80mm, PH2x100mm: 1 հատ Մեկուսացված կարգավորելի բանալին ՝ 200 մմ (8 ″ : հատ ՝ Մեկուսացված վեցանկյուն վարդակներ (1/2 ″) ՝ 10 մմ , 11 մմ, 12 մմ, 13 մմ, 14 մմ, 16 մմ, 17 մմ, 18 մմ, 19 մմ, 22 մմ, 24 մմ, 27 մմ, 30 մմ, 32 մմ: հատ Մեկուսացված երկարացման ձողեր (1/2 ″) ՝ 125 մմ, 250 մմ :	հատ	136000	136000	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1	

			1 հատ 1/2 " Մեկուսացված պտուտակավոր բանալի,կամ համարժեք							
11	44311170/	Եռակցման ապարատ	Եռակցման Սարք Արգոնային TIG/MMA 160A Կախված նյութից կամ արտադրանքի առանձնահատկություններից, արհեստավորները ընտրում են զոդման տարբեր եղանակներ՝ MMA(ձեռքով մետաղական աղեղ) - մեխանիկական աղեղային եռակցում էլեկտրոդներով : TIG(վոլֆրամի իներտ գազ) - արգոնային ձեռքով եռակցում վոլֆրամի չհալվող էլեկտրոդներով՝ պաշտպանական գազով (արգոն) : Total TIG1601 - եռակցման սարքը , ոչ մեծ , որը միշտ որակով առաջատար է , նախագծված է կոմպակտ , օգնելու համար , որ մենք հեշտությամբ և արագ շարժվենք , սարքը աշխատում է շարունակաբար երկար ժամանակ՝ առանց որակի , կարողության նվազման: էլեկտրոնային եռակցման սարքը աշխատում է 1.6 մմ - ից 3.2 մմ ձողերով : Կայուն աղեղը , կպչունության բարձր դիմադրությունը , կարող են զոդել դժվար զոդվող ձողերը : Սարքավորումը պաշտպանելու համար ջերմաստիճանի վերահսկում : ARC-Force. Կարգավորում է հզորությունը՝ էլեկտրոդի կպչումից խուսափելու համար, երբ էլեկտրոդի և աշխատանքային մասի միջև հեռավորությունը նվազում է : Թեժ սկիզբ. Պարզեցնում է աղեղի հարվածը՝ եռակցման սկզբում հակիրճ ավելացնելով հզորությունը : Anti-Stick. Անջատում է սարքավորումը, երբ էլեկտրոդը կպչում է, խնամելով մասը, էլեկտրոդը և հեշտացնում թռիչքը :	հատ	194460	194460	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1	Պայման ագիր կնքելու հետո մինչև ս/թ 30.12.2022թ.

			Հավաքածուի մեջ՝ Էլեկտրոդի բռնակ լարով - 1 հատ : Մետաղալարի բռնակ - 1 հատ : Մալուխ գետնացման բռնակով - 1 հատ : Մետաղական խոզանակ - 1 հատ : Սաղավարտ - 1 հատ : Հզորությունը՝ 5.72 կՎԱ = 4.58 կՎտ : Լարումը՝ 220 - 240 վ ~ 50 / 60 Հց : Ելքային լարումը (MMA)՝ 15 - 160 Ա : Ելքային լարման բարձրացում (TIG)՝ 15 - 160 Ա : Անլար լարումը 85 Վ : Առավելագույն ելքային լարումը՝ 160 Ա : Գնահատված աշխատանքային ցիկլը՝ 40 % - ի դեպքում 160 Ա. 40 °C : Եռակցման մետաղալարերի տրամագիծը(MMA)՝ 1.6 - 3.2 մմ : Եռակցման մետաղալարերի չափը(TIG)՝ 1.6, 2.4, 3.2 մմ : Սնուցվում է 5 կգ մետաղալարով կոճից :Մետաղալարի արագությունը՝ 2-11 (մ / րոպե) : Ներկառուցված մալուխային սնուցիչ : Տեխնոլոգիա՝ IGBT : Պաշտպանության վարկանիշը՝ IP21 :Քաշը՝ 10 կգ :						
12	33141120/	Սեղմիչներ	**Փականագործական մամլակ (դիսկի) զնդանով 125մմ, THTMF6156** Սեղման ուժ ՝ 2000կգ : Տեսակ ՝ փականագործական : Շուրթերի լայնությունը ՝ 20 մմ : Պտտման գործառույթ - այո : Զնդանի չափ ՝ 95x63 մմ : Աշխատանքային տարածք ՝ 125մմ կամ համարժեք	հատ	80800	161600	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2
14	44511200/	Ձեռքի սղոց	**Անլար շրջանաձև սղոց, TSLI1651** մարտկոցով Հզորությունը՝ 20 Վ : Պտտման հաճ.՝ 4600 պ/ր : Սկավառակի տրամագիծը՝ 165մմ : Սկավառակի նստեցման անցքը՝ 20մմ : Կտրելու խորությունը՝ 90° 55մմ : Կտրելուխորությունը՝ 45° 40մմ : 1կամ համարժեք Ներառյալ 4Ահ մարտկոց և 4Ա լիցքավորիչ	հատ	83820	167640	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2

16	31681100/	Էլեկտրական պարագաներ	Նրբասղոց մարտկոցով TJSLI8501 20Վ / 2Ա - 4Ա - Մարտկոցով աշխատող նրբասղոց TJSLI8501 - ն օգտագործում է 20 վ մարտկոց , ինչը թույլ է տալիս աշխատել ավելի արագ և հարմարավետ : - Այն օգտագործում են պողպատ և փայտ կտրելու համար : - Դուք այլևս կարիք չեք ունենա անհանգստանալու մարտկոցի սպառման մասին , քանի որ , այն լիցքավորվում է 1 ժամում : Պահեստամասեր՝ Միացման Կոճակ TJSLI8501-SP-25 Սարքը արանց մարտկոցի է և առանց լիցքավորիչի : Պտույտների հաճախականությունը ՝ 2600 պ/ր : Կտրման խորությունը ՝ պողպատ - 8մմ , փայտ - 80մմ : Անխոզանակ շարժիչ : 3 աշխատանքային ռեժիմ , կտրման թեքություն ՝ 0-45 : Ինտեգրված աշխատանքային լույս : Ներառված են Ներառյալ 4Ահ մարտկոց, 4Ա լիցքավորիչ և 5 կտրող դանակներ	հատ	72600	145200	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2
17	44511330/	Պտուտակահան	Էլեկտրական պտուտակահան Li-ion մարտկոցով կամ համարժեք, TDLI20011	հատ	32800	65600	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2
18	44511330/	Պտուտակահան	TIDLI20031 20 Վ, 55 Նմ +1 մարտկոց TIDLI20031 դռել - պտուտակահանը սնուցվում է 2 Ա-ի Li-ion (Լիթիում - իոն) մարտկոցով, դրանով իսկ ապահովելով առավելագույն ինքնավարություն, երբ օգտագործվում է ցանցից հեռուը: Փոխանցումատուփի Հավաքածու TIDLI20031-SP-2 Լարումը՝ 20 վ : Պտտման առավելագույն քանակը՝ 0-400 / 0-1900 / րոպե : Առավելագույն հարվածների հաճախականությունը՝ 28500 / րոպե : Պտտման առավելագույն ուժը՝ 55 նմ : Պատրոնի չափը՝ 2.0-13 մմ : Պտտման պահի կարգավորիչը՝ 23 + 1 + 1 : 1 տարվա երաշխիք :	հատ	66900	133800	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2

19	44511370/	Գործիքների հավաքածուներ	Բանալիների հավաքածու ծալովի գլխով Չափը մինիմում՝ 8մմ : THT102RK586 Չափը առավելագույն՝ 19մմ : Տեսակը՝ ծալովի : Նյութը՝ Cr-V : Քանակը հավաքածուի մեջ՝ 8 հատ : Բանալիների չափերը՝ 8 մմ, 10 մմ, 12 մմ, 13 մմ, 14 մմ, 15 մմ, 17 մմ, 19 մմ : կամ համարժեք	հատ	25000	25000	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1
21	31681100/8	էլեկտրական պարագաներ	**Տեխնիկական ֆեն՝** նախատեսված է տարբեր աշխատանքների ընթացքում նյութերը տաքացնելու համար՝ հագեցած է օդի հոսքի արագության և ջերմաստիճանի կարգավորիչով : Հզորությունը՝ 2000 Վտ. : Լարումը՝ 220 վ. : Օդի սպառումը՝ 200 - 500 լ / րոպե. Նվազագույնաշխատանքային ջերմաստիճանը՝ 380 °C. : Առավելագույն աշխատանքային ջերմաստիճանը՝ 570 °C. : Օդի առավելագույն հոսքը՝ 500 լ / մ. կամ ավելի հզոր	հատ	8025	16050	2	ք. Երևան, Մոսկովյան 1	2
23	42651200/4	Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	Մինի Ֆրեզերային Հաստոց՝ օգտագործվում է ձևային հատումների,եզրերի, փորվածքների համար: Լարումը՝ 220-240V ~ 50 / 60Hz: Հզորությունը՝ 600 Վտ : Պտտման արագությունը՝ 34500պ/ր : Աշխատանքային տրամաչափը՝6 մմ, կամ համարժեք:	հատ	29160	29160	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1
24	42651200/5	Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	Ֆրեզային հաստոց՝ օգտագործվում է ձևային հատումների, եզրերի, փորվածքների և փայտի նախշերի համար Հզորությունը՝ 2200 Վտ : Պտտման հաճախականությունը՝ 14000-20000 պ/ր : Լարումը՝ 220 Վտ : Կոլետի(цанги) չափը՝ 6; 8; 12 մմ : Կոլետի(цанги) առավելագույն չափը՝ 12 մմ : Ֆրեզի աշխատանքային խորությունը՝ 60 մմ : կամ համարժեք	հատ	64170	64170	1	ք. Երևան, Մոսկովյան 1	1

			Պտտման հաճախականությունը՝ 14000-20000 պ/ր : Լարումը՝ 220 Վտ : Կոլետի(цанги) չափը՝ 6; 8; 12 մմ : Կոլետի(цанги) առավելագույն չափը՝ 12 մմ : Ֆրեզի աշխատանքային խորությունը՝ 60 մմ : կամ համարժեք							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆին. նախ. գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00243582
Հ/Հ 900011038685
Գլխավոր քարտուղար
Գ. Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արին Բերդի 24/5
ՀՎՀՀ՝ 02239171
Բանկ՝ <<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ
Հաշվեհամար՝ 11817068501000

Տնօրեն՝ Մ. Մեհրաբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«22» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2,3,4,5,6,7,8,10,11,12,14,16,17,18,19,21,23,24		Վարչական սարքավորումներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1781470	1 781 470

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
ք.Երևան Վ.Վաղարշյան 13ա
Ֆին. նախ. գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00243582
Հ/Հ 900011038685
Գլխավոր քարտուղար
Գ. Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արին Բերդի 24/5
ՀՎՀՀ՝ 02239171
Բանկ՝ <<ԱՅԴԻԲԱՆԿ>> ՓԲԸ
Հաշվեհամար՝ 11817068501000

Տնօրեն՝ Մ. Մեհրաբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀԿԿ-ՄԱԱՊՁԲ-22/09-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն